Համաձայնագիր N 1

24.01.2017թ. կնքված թիվ N *«ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2-1»* ծածկագրով

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար ձայնաստեղծ սարքերի ձեռքբերման և տեղադրման ծառայությունների մատուցման գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «31» հունվարի 2017թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, (այսուհետև՝ Գնորդ) և "Ձայնալարերը հեռացվածների միավորում" ՀԿ-ն, ի դեմս նախագահ Ա. Ավետիսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

Պատվիրատուն և Կատարողը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 84-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով *«ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2-1»* ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 7.3-րդ կետը համաձայնության են գալիս պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Պայմանագրի 4.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ:

«4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցած Ծառայության գինը կազմում է 34500000 (Երեսունչորս միլիոն հինգ հարյուր հազար) հազար ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, հարկերն ու տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը»:

2. Պայմանագրով հաստատված N 1 Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված N 1-ի:
3. Պայմանագրով հաստատված N 2 Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված N 2-ի:
4. Սույն համաձայնագիրը և սույն համաձայնագրով հաստատված Հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:
5. Սույն համաձայանգիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից:
6. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
7. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, սույն համաձայնագրով հաստատված Հավելվածները կազմված են 2 էջից: Համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
8. **ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն հասցեն՝ք. Երևան, Կառավարական տուն 3 Բանկի անվանումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն h/h 90001101672 3 տ/հ 01506515	"Ձայնալարերը հեռացվածների միավորում" ՀԿ հասցեն՝ ք. Երևան, Ա. Ահարոնյան 5/2 Բանկի անվանումը՝ «Յունիբանկ» ՓԲԸ h/h 24100103185500 հվհհ 01003935
Աշխատակազմի ղեկավար՝ Ա.Գրիգորյան	Նախագահ Ա. Ավետիսյան
.....	.....
Կ.Տ. (ստորագրություն)	Կ.Տ. (ստորագրություն)

Հավելված 1
2017 թվականի հունվարի «31» -ին կնքված
N 1 համաձայնագրի
« N 1 Հավելված
2017 թվականի հունվարի 24-ին
կնքված *«ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2-1»* գնման պայմանագրի

Հավելված 1
<<24>> հունվարի 2017 թ. կնքված
N«ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2-1» ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ձայնաստեղծ սարքերի տեղադրման ծառայությունների

1. ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների շրջանակներում ձայնաստեղծ սարքերի տեղադրման ծառայությունները /այսուհետ՝ ծառայություն/ մատուցվում են «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն:
2. Ծառայություն մատուցող կազմակերպությունը /այսուհետ՝ Կազմակերպություն/ ծառայությունը մատուցում է իր կողմից հաշվառված և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հաստատված շահառուների ցանկին և հերթականությանը համապատասխան:
3. Ծառայությունն իրականացվում է կազմակերպության մասնագետի և քիթ-կոկորդ-ականջաբանի (այսուհետ՝ Բժիշկ) կողմից:
4. Ծառայության շրջանակներում Շահառուին տրամադրվում է ձայնաստեղծ սարք կամ պրոթեզ:
5. Հիվանդի ցանկությամբ և պրոթեզի տեղադրման ոչ հակացուցվածության դեպքում (ելնելով թեսթավորման արդյունքից և հիվանդի առողջական վիճակից), Բժշկի ցուցումով՝ Կազմակերպությունից Շահառուին տրամադրվում է պրոթեզ, որը կրկնակի վիրահատական միջամտությամբ տեղադրվում է Շահառուի կոկորդում: Իսկ պրոթեզի հակացուցվածության դեպքում և Շահառուի ցանկությամբ Կազմակերպությունը նրան տրամադրում է ձայնասեղծ սարք:
6. Ձայնաստեղծ սարքի տրամադրումից կամ պրոթեզի տեղադրումից (պրոթեզի տեղադրման դեպքում՝անհրաժեշտությունից ելնելով և շահառուի ցանկությամբ) հետո Կազմակերպությունը Շահառուին սովորեցնում է դրանցով խոսել:
7. Կազմակերպությունը ծառայությունը մատուցում է ստորև բերված ցուցանիշներին համապատասխան՝

Չափաբաժին 1	**Ձայնաստեղծ սարք**
Սարքի զանգվածը	110 գրամից ոչ ավելի
Սարքի և կոկորդի շփման մակերեսը	2 քառ.սմ-ից ոչ պակաս
Ակուստիկ ուժեղացումը	150 ԴԲ ոչ քիչ
Հաճախականությունը	150-6000 հերց
Սարքը իր հետ պետք է ունենա	լիցքավորման 1 սարք, 1 չլիցքավորվող /կրոնա կամ համարժեքը/ և 1 լիցքավորվող մարտկոց

Սարքը պետք է լինի	• հակահարվածային պաշտպանությամբ
	• Արտաքին մասից պետք է ունենա ձայնի ուժգնության կարգավորիչ.
	• Արտաքինից կամ ներսից պետք է ունենա ձայնի տեմբրի կարգավորման հնարավորություն.
	• Պետք է ունենա լեզվին հպման հարմարանք (կոկորդին հպելիս խոսել չկարողանալու դեպքում, բերանում հպվի լեզվին)
	• չօգտագործված
Երաշխիքային ժամկետը՝	ձայնաստեղծ սարքի շահառուին տրամադրումից հետո՝ 1 տարի



Չափաբաժին 2	**Ձայնաստեղծ պրոթեզ**
Պրոթեզի չափսերը	4մմ-15մմ
Պրոթեզի արտաքին մակերևույթը	առանց ներճմլվածքների, ճաքերի, քերծվածքների
Պրոթեզի նյութը	բժշկական սիլիկոնե ռեզինից և պլաստիկից
Պրոթեզը պետք է պարունակի	փական շնչառության համար, կերակրափողի ծայր, շնչափողի ծայր, հակասնկային շերտ, պրոթեզի մաքրման խոզանակ, սիլիկոնե խողովակ /բժշկի ցուցման դեպքում/
Պրոթեզը պետք է լինի	չօգտագործված

8. Կազմակերպությունը պարտավոր է՝

1) Ծառայություն ստացած յուրաքանչյուր անձի համար վարել անձնական գործ (ներառյալ՝ հեռախոսահամար)
2) Նախարարության պահանջի դեպքում տրամադրել ծառայություններ ստացած անձանց անձնական գործերը.

3) Ձայնաստեղծ սարք կաս պրոթեզ տրամադրելու նպատակով ըստ անհրաժեշտության արտագնա այցելություններ կազմակերպել ՀՀ մարզեր:
4) Ունենալ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝
   - մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
   - մասնագիտական փորձառություն.
   - տեխնիկական միջոցներ.
   - ֆինանսական միջոցներ.
   - աշխատանքային ռեսուրսներ.
   - Համապատասխան շենքային պայմաններ՝ քաղաքացիներին պատշաճ ընդունելու և սպասարկելու, արտադրության գործընթացը կազմակերպելու համար.
5) Իրենց դիմած հաշմանդամություն կամ այլ սոցիալական կարգավիճակ ունեցող անձանց տրամադրել տեղեկատվություն Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման ծառայությունների շրջանակներում այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (պարագաների տրամադրման) վերաբերյալ՝ ***պատվիրատուից ստացած ձևաչափով***:
6) Ծառայություն մատուցելուց հետո՝ նույն օրը, ծառայություն ստացած անձանց տվյալները (ներառյալ հեռախոսահամար) մուտքագրել «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման» տեղեկատվական համակարգ՝ ղեկավարվելով այդ համակարգի ՀՀ ԱՍՀ նախարարի կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքի պահանջներով և վարել շտեմարանը:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ	Ծառայության			Նախատեսվում է գնել 2017 թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Ձայնաստեղծ սարք	հատ	345000	17	5865,0	21	7245.0	21	7245.0	26	8970.0	**85**	**29325.0**
2	Ձայնաստեղծ պրոթեզ	հատ	345000	3	1035.0	4	1380.0	4	1380.0	4	1380.0	**15**	**5175.0**
Ընդամենը												**100**	**34500.0**

ԳՆՈՐԴ

Աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյան

(ստորագրություն)

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Նախագահ Լ. Ավետիսյան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված 2
2017 թվականի հունվարի «31» -ին կնքված
N 1 համաձայնագրի
« N 3 Հավելված
2017 թվականի հունվարի 24-ին
կնքված *«ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2-1»* գնման պայմանագրի

ԼՍՈՂԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՍԱՅԼԱԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ հազ. դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1-2	Ձայնաստեղծ սարքերի ձեռքբերման և տեղադրման ծառայություններ		6900.0	6900.0	9775.0	12650.0	15525.0	18400.0	21275.0	24150.0	27600.0	31050.0	34500.0	**34500.0**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ԳՆՈՐԴ

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՁԱՅՆԱՍՏԵՂԾ ՍԱՐՔԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N *«ԱՄՀՆ-ՇՀԾՁԲ-17/2-1»*

ք. Երևան «24» հունվարի 2017 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ձայնալարերը հեռացվածների միավորում» ՀԿ-ն, ի դեմս կազմակերպության նախագահ Ա. Ավետիսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ձայնաստեղծ սարքերի ձեռքբերման և տեղադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է _____ (_____տառերով_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան _____ 20 թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով

սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Սույն պայմանագիրը կազմված է **10** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն հասցեն՝ք. Երևան, Կառավարական տուն 3 Բանկի անվանումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն h/h 900011016728 հվհհ 01506515	"Ձայնալարերը հեռացվածների միավորում" ՀԿ հասցեն՝ ք. Երևան, Ա. Ահարոնյան 5/2 Բանկի անվանումը՝ «Յունիբանկ» ՓԲԸ h/h 24100103185500 հվհհ 01003935
Աշխատակազմի ղեկավար՝ Ա.Գրիգորյան	Նախագահ Ա. Ավետիսյան
Կ.Տ. ..... (ստորագրություն	..... Կ.Տ. .....

Հավելված 1
<<24>> հունվարի 2017 թ. կնքված
N«ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2-1» ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ձայնաստեղծ սարքերի տեղադրման ծառայության

1. ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների շրջանակներում ձայնաստեղծ սարքերի տեղադրման ծառայությունները /այսուհետ՝ ծառայություն/ մատուցվում են «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն:
2. Ծառայություն մատուցող կազմակերպությունը /այսուհետ՝ Կազմակերպություն/ ծառայությունը մատուցում է իր կողմից հաշվառված և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հաստատված շահառուների ցանկին և հերթականությանը համապատասխան:
3. Ծառայությունն իրականացվում է կազմակերպության մասնագետի և քիթ-կոկորդ-ականջաբանի (այսուհետ՝ Բժիշկ) կողմից:
4. Ծառայության շրջանակներում Շահառուին տրամադրվում է ձայնաստեղծ սարք կամ պրոթեզ:
5. Հիվանդի ցանկությամբ և պրոթեզի տեղադրման ոչ հակացուցվածության դեպքում (ելնելով թեսթավորման արդյունքից և հիվանդի առողջական վիճակից), Բժշկի ցուցումով՝ Կազմակերպությունից Շահառուին տրամադրվում է պրոթեզ, որը կրկնակի վիրահատական միջամտությամբ տեղադրվում է Շահառուի կոկորդում: Իսկ պրոթեզի հակացուցվածության դեպքում և Շահառուի ցանկությամբ Կազմակերպությունը նրան տրամադրում է ձայնասեղծ սարք:
6. Ձայնաստեղծ սարքի տրամադրումից կամ պրոթեզի տեղադրումից (պրոթեզի տեղադրման դեպքում՝անհրաժեշտությունից ելնելով և շահառուի ցանկությամբ) հետո Կազմակերպությունը Շահառուին սովորեցնում է դրանցով խոսել:
7. Կազմակերպությունը ծառայությունը մատուցում է ստորև բերված ցուցանիշներին համապատասխան՝

Չափաբաժին 1	**Ձայնաստեղծ սարք**
Սարքի զանգվածը	110 գրամից ոչ ավելի
Սարքի և կոկորդի չափման մակերեսը	2 քառ.սմ-ից ոչ պակաս
Ակուստիկ ուժեղացումը	150 ԴԲ ոչ քիչ
Հաճախականությունը	150-6000 հերց
Սարքը իր հետ պետք է ունենա	լիցքավորման 1 սարք, 1 չլիցքավորվող /կրոնա կամ համարժեքը/ և 1 լիցքավորվող մարտկոց
Սարքը պետք է լինի	• հակահարվածային պաշտպանությամբ
	• Արտաքին մասից պետք է ունենա ձայնի ուժգնության

	կարգավորիչ.
	• Արտաքինից կամ ներսից պետք է ունենա ձայնի տեմբրի կարգավորման հնարավորություն.
	• Պետք է ունենա լեզվին հպման հարմարանք (կոկորդին հպելիս խոսել չկարողանալու դեպքում, բերանում հպվի լեզվին)
	• չօգտագործված
Երաշխիքային ժամկետը՝	ձայնաստեղծ սարքի շահառուին տրամադրումից հետո՝ 1 տարի
	

Չափաբաժին 2	**Ձայնաստեղծ պրոթեզ**
Պրոթեզի չափսերը	4մմ-15մմ
Պրոթեզի արտաքին մակերևույթը	առանց ներճմլվածքների, ճաքերի, քերծվածքների
Պրոթեզի նյութը	բժշկական սիլիկոնե ռեզինից և պլաստիկից
Պրոթեզը պետք է պարունակի	փական շնչառության համար, կերակրափողի ծայր, շնչափողի ծայր, հակասնկային շերտ, պրոթեզի մաքրման խոզանակ, սիլիկոնե խողովակ /բժշկի ցուցման դեպքում/
Պրոթեզը պետք է լինի	չօգտագործված

8. Կազմակերպությունը պարտավոր է՝

1) Ծառայություն ստացած յուրաքանչյուր անձի համար վարել անձնական գործ (ներառյալ՝ հեռախոսահամար)
2) Նախարարության պահանջի դեպքում տրամադրել ծառայություններ ստացած անձանց անձնական գործերը.
3) Ձայնաստեղծ սարք կամ պրոթեզ տրամադրելու նպատակով՝ ըստ անհրաժեշտության արտագնա այցելություններ կազմակերպել ՀՀ մարզեր:
4) Ունենալ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝
   - մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

- մասնագիտական փորձառություն.
- տեխնիկական միջոցներ.
- ֆինանսական միջոցներ.
- աշխատանքային ռեսուրսներ.
- Համապատասխան շենքային պայմաններ՝ քաղաքացիներին պատշաճ ընդունելու և սպասարկելու, արտադրության գործընթացը կազմակերպելու համար.

5) Իրենց դիմած հաշմանդամություն կամ այլ սոցիալական կարգավիճակ ունեցող անձանց տրամադրել տեղեկատվություն Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման ծառայությունների շրջանակներում այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (պարագաների տրամադրման) վերաբերյալ՝ ***պակտվիրատուից ստացած ձևաչափով***:

6) Ծառայություն մատուցելուց հետո՝ նույն օրը, ծառայություն ստացած անձանց տվյալները (ներառյալ հեռախոսահամար) մուտքագրել «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման» տեղեկատվական համակարգ՝ ղեկավարվելով այդ համակարգի ՀՀ ԱՍՀ նախարարի կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքի պահանջներով և վարել շտեմարանը:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ հազ. դրամ

Հ/Հ	Ծառայության			Նախատեսվում է գնել 2017 թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Ձայնաստեղծ սարք	հատ										**85**	
2	Ձայնաստեղծ պրոթեզ	հատ										**15**	
Ընդամենը												**100**	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Կ.Տ.

Հավելված 2

<<24>> հունվարի 2017 թ. կնքված
N «ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2-1» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ հազ. դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 20 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1-2	Ձայնաստեղծ սարքերի ձեռքբերման և տեղադրման ծառայություններ													

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ **ԿԱՏԱՐՈՂ**

(ստորագրություն) (ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
<<____>> _____20 թ. կնքված
N _____ ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
<<____>> _____20 թ. կնքված
N _____ ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն